ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ № 27/83-Լ «10» 02 2022

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ՄՐՑԱՆԱԿ» ԱՄԵՆԱՄՅԱ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կանոնադրության 56-րդ կետի 10-րդ ենթակետով.

հրամայում եմ

1. Հաստատել «Երևանի պետական համալսարանում դասավանդման գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթի կազմակերպման և անցկացման կարգը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի 2019 թ. նոյեմբերի 27-ի թիվ 221/120 հրամանը:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
4. Սույն հրամանի մասին տեղեկացնել ԵՊՀ աշխատակիցներին:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ Հ. Հովհաննիսյան

Հավելված
ԵՊՀ ռեկտորի 2022 թ. փետրվարի 10-ի
թիվ 27/88-Ղ հրամանի

ԿԱՐԳ
«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ՄՐՑԱՆԱԿ» ԱՄԵՆԱՄՅԱ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ (ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը հիմնվում է «ԵՊՀ 2021-2026 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի» 1-ին կետի 4-րդ խնդրի դրույթների վրա:

2. Սույն կարգով սահմանվում է «Երևանի պետական համալսարանում դասավանդման գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթի (այսուհետ՝ մրցույթ) կազմակերպման և անցկացման կարգը, որի նպատակն է նպաստել դասավանդման մեթոդների կատարելագործմանը, արդի մեթոդների կիրառմանը և լավագույն փորձի տարածմանը:

2. ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ

3. Մրցույթը կազմակերպվում և անցկացվում է տարեկան մեկ անգամ:

4. Մրցույթին կարող են մասնակցել ԵՊՀ-ում հիմնական, համատեղությամբ կամ ժամավճարային հիմունքներով դասավանդողները, ովքեր տվյալ ուսումնական տարվա ընթացքում ԵՊՀ-ում դասավանդում են առնվազն 2 մասնագիտական դասընթաց: Մրցութային հանձնաժողովի անդամները և նախորդ տարվա հաղթող ճանաչված դասախոսները մրցույթին մասնակցել չեն կարող:

5. Մրցույթն ունի երկու բաղադրիչ՝ մրցանակակիրների ընտրություն և դասընթացների տեսաձայնագրում.

ա) մրցանակակիրների ընտրությունը իրականացվում է մրցութային ուսումնական տարում: Մրցույթի արդյունքներն ամփոփվում են յուրաքանչյուր տարվա մայիսի 16-ին, կամ հաջորդող երկուշաբթի:

բ) լավագույն փորձի տարածման նպատակով մրցանակաբաշխությանը հաջորդող ուսումնական տարվա ընթացքում տեսաձայնագրվում է մրցանակակրի կողմից առաջարկված մեկ մոդուլ:

6. Մրցույթի անվանակարգերն են՝

ա) Ֆիզիկամաթեմատիկական (մասնակից ստորաբաժանումներ՝ Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի, Մաթեմատիկայի և մեխանիկայի, Ռադիոֆիզիկայի, Ֆիզիկայի ֆակուլտետներ, ՏՏ կենտրոն) մասնագիտությունների անվանակարգ՝ 2 մրցանակ,

բ) Բնագիտական (մասնակից ստորաբաժանումներ՝ Կենսաբանության, Աշխարհագրության և երկրաբանության, Քիմիայի ֆակուլտետներ, Ֆարմացիայի ինստիտուտ) մասնագիտությունների անվանակարգ՝ 2 մրցանակ,

գ) Բանասիրական (մասնակից ստորաբաժանումներ՝ Հայ բանասիրության, Եվրոպական լեզուների և հաղորդակցության, Ռուս բանասիրության, Արևելագիտության, Ժուռնալիստիկայի ֆակուլտետներ) մասնագիտությունների անվանակարգ՝ 3 մրցանակ,

դ) Հասարակագիտական (մասնակից ստորաբաժանումներ՝ Պատմության, Տնտեսագիտության և կառավարման, Աստվածաբանության, իրավագիտության, Միջազգային հարաբերությունների, Փիլիսոփայության և հոգեբանության, Սոցիոլոգիայի ֆակուլտետներ) մասնագիտությունների անվանակարգ՝ 3 մրցանակ:

3. ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

7. Յուրաքանչյուր անվանակարգում մրցանակակրին ընտրելու նպատակով ձևավորվում է առանձին հանձնաժողով, որի կազմը հաստատվում է ԵՊՀ ռեկտորի հրամանով:

8. Հանձնաժողովներն առաջնորդվում է «Երևանի պետական համալսարանում դասավանդման գերազանցության մրցանակի» համակարգող հանձնաժողովների աշխատակարգով:

9. Իր գործունեությունն արդյունավետ իրականացնելու նպատակով հանձնաժողովն իրավասու է կատարելու դասալսումներ և հանձնաժողովի աշխատանքներում ներգրավելու փորձագետներ:

10. Թեկնածուների առաջադրման, մրցանակակրի ընտրության և այլ կազմակերպական աշխատանքների կատարման նպատակով հանձնաժողովը հրավիրում է նիստեր: Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են անդամների ընդհանուր թվի առնվազն 2/3-ը: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Մրցանակակիրների վերաբերյալ հանձնաժողովի որոշումները մինչև մրցանակաբաշխության անցկացման օրը ենթակա չեն հրապարակման:

11. Մրցույթի արդյունքներով հանձնաժողովը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը՝
   ա) մրցանակակիր ճանաչելու և մրցանակը շնորհելու մասին,
   բ) մրցույթը չկայացած համարելու մասին,
   գ) մրցանակակիր չճանաչելու մասին*:

12. Հանձնաժողովն ընդունում է մրցույթը չկայացած համարելու մասին որոշում, եթե ներկայացված բոլոր դիմում-հայտերը մերժվել են:

4. ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

13. Մրցույթի անցկացման պայմանների և թեկնածուների առաջադրման մասին տեղեկատվությունը հանձնաժողովը հայտարարում է մինչև ընթացիկ տարվա մարտի 1-ը: Թեկնածուների առաջադրումն իրականացվում է համապատասխան հայտերի միջոցով՝ էլեկտրոնային (առցանց) ձևաչափով (դիմում-հայտի ձևը հաստատվում է հանձնաժողովի կողմից):

14. Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է ընթացիկ տարվա մարտի 31-ը:

15. Մրցույթի մասնակիցը պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը.
   ա) դիմում-հայտ,
   բ) ինքնակենսագրություն (CV),
   գ) ընթացիկ ուսումնական տարում դասավանդվող դասընթացների ցանկ՝ հաստատված ամբիոնի վարիչի կողմից,

---

* Համակարգող հանձնաժողովի կողմից սահմանված գնահատման սանդղակի 80 տոկոսը չապահովելու դեպքում:

դ) լսարանային գործունեության օրինակներ՝ ակտիվ ուսուցման և նորարարական մեթոդների օգտագործմամբ, ինչպես նաև հեռավար դասախոսության տեսաձայնագրության առնվազն 1 օրինակ,

ե) ուսումնական տարվա ընթացքում դասավանդվող դասընթացների համար ուսանողների գնահատականները՝ որպես հետադարձ կապի արդյունքներ:

զ) դասընթացի ընթացքում ուսանողների կողմից ներկայացված աշխատանքների օրինակներ (առկայության դեպքում),

է) դեկանի կամ ամբիոնի վարիչի կողմից աջակցության նամակ,

ը) վերջին 5 տարվա ընթացքում դասավանդվող առարկաների թեմաների վերաբերյալ գիտահետազոտական և ուսումնամեթոդական աշխատանքներ (առկայության դեպքում),

թ) վերջին 2 տարվա ընթացքում թեկնածուի դասերին մասնակցած ուսանողների աջակցության նամակ(ներ), (առկայության դեպքում),

ժ) ընթացիկ ուսումնական տարում դասավանդվող դասընթացների (առնվազն 2) պլան՝ տեղադրված «E-learning» հարթակում:

16. Եթե մրցույթի մասնակիցը ներկայացրել է թերի կամ ոչ լիարժեք փաստաթղթեր, ապա հանձնաժողովը տրամադրում է երկու աշխատանքային օր՝ թերությունները շտկելու և դիմումը կրկին ներկայացնելու համար: Եթե մրցույթի մասնակիցը նշված ժամկետում ներկայացնում է ճշգրտված փաստաթղթերը, ապա դիմումը համարվում է ընդունված սկզբնական ներկայացման օրը: Եթե մրցույթի մասնակիցը նշված ժամկետում չի շտկում թերությունները և կրկին չի ներկայացնում դիմումը կամ ներկայացնում է թերությունները չշտկված, ապա նրա դիմում-հայտը համարվում է մերժված:

5. ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ

17. Մրցանակակիրների պարգևատրումը կատարվում է մրցանակաբաշխության արարողության ընթացքում:

18. Մրցանակակիրներին տրվում է հավաստագիր և պարգևատրում՝ 300 000 ՀՀ դրամի չափով, ներառյալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հարկերը:

19. Մրցանակակիրներն հնարավորություն ունեն տեսաձայնագրել մեկ կրթական մոդուլ, որի կատարման դեպքում յուրաքանչյուրին վճարվում է պարգևատրում՝ 1 000 000 ՀՀ դրամի չափով՝ ներառյալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հարկերը:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ Հ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ